ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 սեպտեմբերի 2025 թվականի N 892-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ «ԽՈՐՈՆՔԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀԵՐՄԻՆԵ ԽԱՉԻԿԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԵՐՄԻՆԵ ԽԱՉԻԿԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՀԵՏ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի 02-Ն հրամանով հաստատված կարգի 72-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի «Խորոնքի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 02-ի եզրակացությունը և Հերմինե Խաչիկի Գասպարյանի 2025 թվականի սեպտեմբերի 02-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հերմինե Խաչիկի Գասպարյանին 2025 թվականի սեպտեմբերի 03-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի «Խորոնքի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում:
2. Լուծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի «Խորոնքի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հերմինե Խաչիկի Գասպարյանի հետ 2025 թվականի մարտի 10-ին կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը՝ 2025 թվականի սեպտեմբերի 03–ից:
3. Հերմինե Խաչիկի Գասպարյանի հետ կնքել 5 տարի ժամկետով աշխատանքային պայմանագիր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 03
Արաքս համայնք